

# Մասնակցություն Հայաստանին

Ապրիլ, 2005



Դեյլ Ռեդինգը՝

“Աջակցություն Հայաստանին” ծրագրի ղեկավարը, ապրիլին իր հերթական այցը կատարեց Հայաստան: Այս ծրագրի հիմնական նպատակը համակարգչային գրագիտություն ուսուցանելն է գյուղական վայրերում: Միայն այս տարի այս ծրագրի սահմաններում 140 համակարգիչ է առաքվել Հայաստանի գյուղական վայրեր: ԱՄՆ-ի Լա Գրանթ եկեղեցու և Դեյլ Ռեդինգի անձնական ջանքերի շնորհիվ արդեն մի քանի տարի է, ինչ գյուղական դպրոցները և այլ կրթական օջախներ օգտվում են համակարգիչներից: HDP-ն ստանում է համակարգիչները, բաշխում դպրոցներին և այնուհետև հսկում, որպեսզի նրանք նորմալ աշխատանքային վիճակում լինեն:

Դեյլի այցի նպատակն էր ստուգել և տեղեկանալ բաշխված համակարգիչների աշխատանքին, դրանց արդյունավետ օգտագործմանը և, անհրաժեշտության դեպքում, լուծել համակարգիչների առաքման հետ կապված խնդիրները: HDP համակարգչային կորրոկցիաները՝ Նարինեն, մասնակցում էր այցերին և օգնում Դեյլին: Նրանք այցելեցին Տավուշի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի կրթական հաստատություններն ու շատ արդյունավետ հանդիպումներ ունեցան. հնարավորություն եղավ տեղում ծանոթանալ պրոբլեմներին և հնարավորինս լուծել դրանք: Օգտակար էին նաև Դեյլի մասնագիտական խորհուրդները: Այցի վերջում կազմակերպվեց մրցույթ՝ շահառու դպրոցների միջև: Սա, իհարկե, դարձավ ամենաուշագրավ իրադարձությունը. երեխաները շատ ոգևորված էին, իսկ համապատասխան դպրոցները անհամբեր՝ ցուցադրելու իրենց սաների հմտություններն ու գիտելիքները:

Մրցույթն անցկացվեց Թալինում՝ ապրիլի 30-ին, Թալինի և շրջակա գյուղերի դպրոցների սաների միջև: Մրցանակներ էին սահմանված լավագույն 3 հաղթող դպրոցների համար: Առաջին մրցանակին արժանացավ Թալինի № 1 դպրոցը. նրանք ստացան նոր, ժամանակակից համակարգիչ: Երկրորդ և երրորդ տեղերի մրցանակները տրվեցին Թալինի № 2 և Մաստարայի դպրոցներին. վերջիններս ստացան ավելի հին մոդելի, սակայն նորմալ աշխատող համակարգիչներ:

Նկարում Մաստարա գյուղի հաղթող աշակերտը բացում է նվերը:



Նախկինում չունենալով նույնիսկ տարրական համակարգչային հմտություններ՝ նա այսօր իր գիտելիքների շնորհիվ դպրոցին նվիրում է համակարգիչ և նոր տպիչ:

Չափազանց ուրախալի է, որ բաշխված համակարգիչները ժամանակի ընթացքում տալիս են իրենց դրական արդյունքները:

Թ. թձձձ՝ թ 14, թՄ. 45  
 օ ղ՝՝՝ Մ, ԹՅ լՅ քի՝ ՅՄ  
 Թձձ. 26 17 61, ՍՅ Սձ՝ 27 47 86  
 Email: hdp@xter.net



## HDP Հիմնադրամ

Ի՞նչ ենք մենք խրախուսում և աջակցում

Համակարգչային գրագիտության դաշտում դեռ շատ անելիքներ կան, հատկապես հեռավոր գյուղական բնակավայրերում, որոնք դուրս են մնացել տարբեր ծրագրերի միջամտություններից: Մեր նպատակն է նպաստել հենց այս գյուղերի դպրոցների զարգացմանը: Մեր շահառուներն են հեռավոր գյուղերի կրթական օջախները, տեղական կազմակերպությունները, որոնց մենք փորձում ենք ոչ միայն կերակրել, այլ որ շատ կարևոր է՝ ապահովել նրանց կրթության հնարավորություններով:



Մեր ուղին երկար է սակայն մենք առաջ ենք շարժվում:

# Հայկական Ստեղնաշարի Համակարգչային Ինքնուսույց

Հունիս, 2005

HDP հիմնադրամը Ջինիշյան հիշատակի հիմնադրամի դրամաշնորհի միջոցով և համագործակցելով Ալգորիթմ ծառայության հետ, մշակում է հայերեն լեզվով տպելու համակարգչային ինքնուսույց... առաջին անգամ: Ծրագիրը ստեղծել և այժմ փորձարկվում է տարբեր դպրոցներում և Արտաքին գործերի նախարարությունում՝ գնահատելու նրա կիրառելիությունը և արդյունավետությունը: Համակարգչից շատ օգտվողներ ունեն հայկական տառատեսակներ իրենց համակարգիչներում, սակայն, չկա մի ծրագիր, որը նրանց արագ հայերեն տպել կուսուցանի: Հիրավի, նորամուծություն, որը, հուսով ենք, լայն արձագանք կգտնի և կընդունվի համակարգչից օգտվողների կողմից:



Առաջին փորձարկումը 2005թ. մայիսի 17-ին էր, որին ներկա էին Ռեյ Ռիդերը՝ HDP հիմնադրամի գործադիր տնօրենը, Նարինե Հակոբջանյանը՝ ծրագրի կոորդինատորը,

Ալեքսանդր Ֆարամազյանը՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների տնօրենը, Ռուբեն Կրիկյանը՝ Ջինիշյան հիմնադրամի կրթական բաժանմունքի կոորդինատորը, Քրիստինե ճգնավորյանը՝ Փրոջեքթ Հարմոնիի երիտասարդական առաջնորդության նախաձեռնությունների կոորդինատորը:



Ալեքսանդր Ֆարամազյանը մուտքագրեց ծրագիրը համակարգիչներում և բացատրեց կիրառման ձևն ու նպատակը: Տպման արագությունն ու ճշգրտությունը հանդիսանում են հմտության կարևոր բաղադրիչները:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է գրանցվի համակարգում իր անունով, և վիճակագրական տվյալները ցույց կտան նրանց արդյունքները: Յուրաքանչյուր դպրոցի համակարգչի ուսուցիչը պատասխանատու է աշակերտների և մյուս օգտվողների պարապմունքների համար: Ծրագիրը պարունակում է 46 դաս և ամեն դասից հետո էկրանին երևում է արդյունքը տոկոսներով: Ի զարմանս և ուրախություն մեզ, աշակերտները բավականին արհեստավարժ էին հենց առաջին դասերի ընթացքում, և արդյունքները անցնում էին 90%- ից: Ուստի, վստահ կարող ենք ասել, որ եթե նրանք շարունակեն միևնույն խանդավառությամբ և ոգով, ապա կարճ ժամանակամիջոցում կդառնան հիասքանչ մուտքագրողներ:



## Ինչու՞ “Հայ մուտքագրող 1600”

Հայկական ստեղնաշարի համակարգչային ինքնուսույց ծրագիրն այլապես կոչվում է “Հայ մուտքագրող 1600”. չէ՞ որ այս տարի մենք նշում ենք հայկական գրերի 1600 ամյակը: HDP-ն կարևոր է համարում այս ծրագրի հաջողությունը հատկապես օգտագործելիության առումով: Արդեն ծրագրում ընդգրկված դպրոցները և ուսանողները բավականին ոգևորված են. մենք կհսում ենք այդ ոգևորությունը և պլանավորում ենք առաջիկա 1-2 ամսում զբաղվել այս ծրագրի լայն տարածմամբ և լուսաբանմամբ՝ հեռուտատեսության,



ռադիոյի, համակարգչային երիզների միջոցով: Ուրախ կլինենք օգնելու Հայաստանի դպրոցներին ձեռք բերել այս ծրագիրը:

## HDP ՀԻՄՆԱԴՐԱՍ

Հ. Քոչար 14, բն. 45  
Երևան, Հայաստան  
Հեռ. 26 17 61, Ֆաքս՝ 27 47 86  
Email: hdp@xter.net